ՀԱԱՀ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18-20

ք. Երևան 12-ը նոյեմբերի 2018թ.

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտորի ԺՊ Վ. Ուռուտյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մեդիսար» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Գաբրիելյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 651000 (վեց հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող

փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը,

Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ	<<Մեդիսաֆ>> ՍՊԸ
ք. Երևան,Տերյան 74	ք. Երևան, Գետառի 4/9
«Արդշինբանկ» ՓԲԸ	<<Ինեկոբանկ>> ՓԲԸ
Հ/Հ՝ 247010053103	Հ/Հ 2050022415811001
ՀՎՀՀ՝ 01507028	ՀՎՀՀ 02555635
Ռեկտորի ԺՊ	Տնօրեն Մ. Գաբրիելյան
Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ	

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժնի համարը	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	Ինդոլիլ-3- քացախաթթու,≥99,0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝բաց շագանակագույն փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99,0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{10}H_9NO_2$ Մոլեկուլային զանգվածը՝ 175,19 գ/մոլ Հալման կետ՝ 163-170 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 25 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
2.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	α-նաֆտիլքացախաթթու, ≥99,0% Կենսաբանական/բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակադեղին գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99,0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{12}H_{10}O_2$ Մոլեկուլային զանգվածը՝ 186,21 գ/մոլ Հալման կետ՝ 129-131 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 25 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
3.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	Ինդոլիլ-3-կարագաթթու,≥99,0 % Կենսաբանական/բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակ փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99,0%, Էմպիրիկ բանաձևը՝ $C_{12}H_{13}NO_2$ Մոլեկուլային զանգվածը՝ 203,24 գ/մոլ Հալման կետ՝ 122-124 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 25 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 3 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները

4.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	2,4-դիքլորֆենոքսիքացախաթթու(2,4-Դ), ≥97,0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակադեղին գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝≥97% Էմպիրիկ բանաձևը՝ $Cl_2C_6H_3OCH_2CO_2H$ Մոլեկուլային զանգվածը՝ 221.04 գ/մոլ Հալման կետ՝ 136-140 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 5 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
5.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	Բենզիլամինոփուրին, ≥99.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքինտեսք՝ սպիտակգույնիփոշի Մաքրության աստիճան (HPLC)՝≥99.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{12}H_{11}N_5$ Մոլեկուլային զանգվածը՝ 225.25 գ/մոլ Հալման կետ՝ 230-233 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 5 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
6.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	Հիբերելաթթու, ≥90.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝սպիտակ փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥90.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{19}H_{22}O_6$ Մոլեկուլային զանգվածը՝ 346,38 գ/մոլ Հալման կետ՝ 225-226 ° C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 1 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 2 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
7.	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/	Կինետին, ≥99.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքինտեսք՝ սպիտակ փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{10}H_9N_5O$ Մոլեկուլային զանգվածը՝ 215.21գ/մոլ Հալման կետ՝ 264-270 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 5 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 2 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները

8.	Վիտամին /բուսական խթանիչ/	Փիրիդոքսինհիդրոքլորիդ /Փիրիդոքսին- HCl /, ≥98.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակագորշ գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥98.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_8H_{11}NO_3 \cdot HCl$ Մոլեկուլային զանգվածը՝ 205.64գ/մոլ Հալման կետ՝ 214-215 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 50 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 3 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
9.	Վիտամին /բուսական խթանիչ/	Թիամինհիդրոքլորիդ /Թիամին-HCl /,≥99.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակագորշ գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_{12}H_{17}ClN_4OS \cdot HCl$ Մոլեկուլային զանգվածը՝ 337.27գ/մոլ Հալման կետ՝ 249-250 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 25 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
10.	Վիտամին /բուսական խթանիչ/	Նիկոտինաթթու, ≥99.5% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակագորշ գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99.5% Էմպիրիկ բանաձևը՝ $C_6H_5NO_2$ Մոլեկուլային զանգվածը՝ 123,11գ/մոլ Հալման կետ՝235-236 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 100 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
11.	Վիտամին /բուսական խթանիչ/	Գլիցին /α-ամինոքացախաթթու/, ≥99.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրայի/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակ փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_2H_5NO_2$ Մոլեկուլային զանգվածը՝ 75,07 գ/մոլ Հալման կետ՝232-236 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 250 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի

		Տեղափոխումը՝ +4°C,պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
12.	Վիտամին /բուսական խթանիչ/	Մեզո-ինոզիտոլ, ≥99.0% Կենսաբանական /բույսերի բջջային կուլտուրաներ/ և կենսաքիմիական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակ գույնի փոշի Մաքրության աստիճան (HPLC)՝ ≥99.0% Էմպիրիկ բանաձևը՝ $C_6H_{12}O_6$ Մոլեկուլային զանգվածը՝ 180,16 գ/մոլ Հալման կետ՝223-225 °C Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 50 գ, ապակե կամ պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +4°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
13.	Ագար մանրէաբանական	Պոլիսախարիդային դոնդողանման պատրաստուկ սննդային միջավայրեր պատրաստելու համար Արտաքին տեսք՝ դեղնավուն փոշի Դոնդողացում (ջրի մեջ)՝ խիտ գել ագարի 1,5 %-ի խտությամբ: Գելի հալեցում՝ 80-85 °C: Խոնավությունից վախեցող: Փաթեթավորումը՝ պլաստիկե տարայով, 1,0 կգ-անոց: Տեղափոխումը՝ +20°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
14.	Տրիլոն -Բ /էթիլենդիամինտետր աքացախաթթվի դինատրիումի աղ կամEDTA-Na_2/	Օրգանական միացություն կենսաբանական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ սպիտակ գույնի փոշի Էմպիրիկ բանաձևը՝ $C_{10}H_{14}N_2Na_2O_8 \cdot 2H_2O$ Մոլեկուլային զանգվածը՝ 372.24գ/մոլ Խոնավությունից վախեցող Փաթեթավորումը գործարանային՝ 500 գ, պլաստիկե տարայով: Տեղափոխումը՝ +20°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները
15.	Կազեինի հիդրոլիզատ	Սպիտակուցային պատրատտուկ կենսաբանական և մանրէաբանական հետազոտությունների համար Արտաքին տեսք՝ դեղին գույնի փոշի, սուր հոտով Լուծելիություն՝ 310 գ /լ (H_2O, 23 °C) Ընդհանուր ազոտի քանակը՝ 7.0-8.5% Չորացման կորուստ՝<6% pH արժեքը՝ 4.5-6.0 Փաթեթավորումը գործարանային՝ 100 գ, պլաստիկե տարայով Պիտանիության ժամկետը հանձման պահին՝ առնվազն 4 տարի Տեղափոխումը՝ +20°C, պահպանել քիմ. նյութերի հետ վարվելու, դրանց պահպանման և անվտանգության կանոնները

Ծանոթություն

*Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը անհրաժեշտ է, որ ներկայացնի իր կողմից առաջարկվող չափաբաժինների մասով ապրանքային նշանի, արտադրողի, ծագման երկրի վերաբերյալ տեղեկատվություն:

- Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ցանկացած հղման դեպքում կիրառել« կամ համարժեք բառերը:
- Յուրաքանչյուր անվանատող հանդիսանում է որպես առանձին չափաբաժին:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասա-կարգման	Անվանումը	Չափման միավորը	Միավոր գնման գինը /ՀՀ հազ. դրամ/	Քանակը	Մատակարարման ենթակա քանակն ըստ ամիսների (եռամսյակների) * (ոչ ուշ քան 15/12/2018թ.)											
						I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Ինդոլիլ-3- քացախաթթու,≥99 %	գ	2280	25												X
2.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ α-նաֆտիլքացախաթթու, ≥99 %	գ	760	25												X
3.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Ինդոլիլ-3-կարագաթթու,≥99 %	գ	2280	25												X
4.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ 2,4-դիքլորֆենոքսիքացախաթթու (2,4-Դ), ≥97%	գ	5600	5												X
5.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Բենզիլամինոփուրին, ≥99.0%	գ	18400	5												X
6.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Հիբերելաթթու, ≥90.0%	գ	26000	1												X
7.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Կինետին, ≥99.0%	գ	9800	5												X
8.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Փիրիդոքսին հիդրոքլորիդ /Փիրիդոքսին- HCl /, ≥98.0%	գ	560	50												X
9.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Թիամինհիդրոքլորիդ /Թիամին-HCl /,≥99.0%	գ	1040	25												X
10.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/	գ	300	100												X

		Նիկոտինաթթու, ≥99.5%														
11.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Գլիցին /α-ամինոքացախաթթու/, ≥99.0%	գ	76	250											X
12.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Մեզո-ինոզիտոլ, ≥99.0%	գ	480	50											X
13.	33691163	Ազար մանրէաբանական	հատ	18000	3											X
14.	24321660	Տրիլոն -Բ /էթիլենդիամինտետրաքացախաթթվի դինատրիումի աղ կամEDTA-Na2/	գ	232	500											X
15.	24321660	Կազեինի հիդրոլիզատ	գ	260	100											X

ՀՀ դրամ

Ծանոթություն
Մատակարարումն իրականացնել ք. Երևան, Տերյան 74 հասցեով:

ԳՆՈՐԴ
«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»
հիմնադրամ

Ռեկտորի ԺՊ՝

Գ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
<<Մեդիսար>> ՍՊԸ

Տնօրեն Մ. Գաբրիելյան

Հավելված N
ՀԱԱՀ-ԳՀԱՊՁԲ-18/20 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Չ/h	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱ դասակարգման	Անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավոր գնման գինը	Վճարումներընախատեսվումէիրականացնել 2018թ .՝ ըստամիսների, այդ թվում*												
						I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Ընդամենը /հազ.դր/
1.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Ինդոլիլ-3- քացախաթթու,≥99 %	գ	25	2280												57000	57000
2.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ α-նաֆտիլքացախաթթու, ≥99 %	գ	25	760												19000	19000
3.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Ինդոլիլ-3-կարագաթթու,≥99 %	գ	25	2280												57000	57000
4.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ 2,4-դիքլորֆենոքսիքացախաթթու (2,4-Դ), ≥97%	գ	5	5600												28000	28000
5.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Բենզիլամինոփուրին, ≥99.0%	գ	5	18400												92000	92000
6.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Հիբերելաթթու, ≥90.0%	գ	1	26000												26000	26000
7.	24321660	Ֆիտոհորմոն /բուսական խթանիչ/ Կինետին, ≥99.0%	գ	5	9800												49000	49000
8.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Փիրիդոքսին հիդրոքլորիդ /Փիրիդոքսին- HCl /, ≥98.0%	գ	50	560												28000	28000
9.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Թիամինհիդրոքլորիդ /Թիամին-HCl /,≥99.0%	գ	25	1040												26000	26000
10.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Նիկոտինաթթու, ≥99.5%	գ	100	300												30000	30000
11.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Գլիցին /α-ամինոքացախաթթու/, ≥99.0%	գ	250	76												19000	19000

12.	24321660	Վիտամին /բուսական խթանիչ/ Մեզո-ինոզիտոլ, ≥99.0%	գ	50	480												24000	24000
13.	33691163	Ագար մանրէաբանական	հատ	3	18000												54000	54000
14.	24321660	Տրիլոն –Բ /Էթիլենդիամինտետրաքացախաթթվի դինատրիումի աղ կամEDTA-Na_2/	գ	500	232												116000	116000
15.	24321660	Կազեինի հիդրոլիզատ	գ	100	260												26000	26000

ԳՆՈՐԴ

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ

Ռեկտորի ԺՊ՝ Վ. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

<<Մեդիսար>> ՍՊԸ

Տնօրեն Մ. Գաբրիելյան